ՓԵՐԻԱՀԱՅԵՐԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ. ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

Լիանա Ավետիսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ lian19921992@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 23.11.2021, գրախոսվել է 25.11.2021, ընդունվել է տպագրության 05.07.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.2-287

Ներածություն

Իրանահայ ականավոր պատմաբան Լևոն Մինասյանը իր ստեղծագործություններից մեկում անդրադարձել է Իրանի Փերիա գավառի գյուղերում կատարվող տոներին՝ դրանք բաժանելով կրոնական-եկեղեցականի և ազգային-ժողովրդականի: Այդ տոներից յուրաքանչյուրն ունի իր առանձին ծեսերն ու սովորությունները: Փերիահայոց ամուսնական ավանդույթներն ունեն իրենց ուրույն դիմագիծը[1]:

Ծատուր Զարգարյանի «Պարսկաստանի Փերիայի գավառի հայերի ազգագրությունից»[2] աշխատանքը լուսաբանում է Փերիա հայաշատ գավառի բնակչության ավանդական նիստուկացի տարբեր կողմերը: Այս արխիվային նյութերում արժեքավոր տեղեկություններ կան իրանահայ մշակույթի մասին, որոնք հեղինակը գրի է առել Հրազդան քաղաքում բնակվող հայրենադարձներից:

Օգտագործելով վերոնշյալ տեղեկությունները՝ ստորև ներկայացնում ենք Փերիա գավառի հայաբնակ գյուղերում նշանադրության (նըշան դըրէք) և հարսանիքի (հաշնիքի) սովորույթները և դրանց առնչվող ծեսերը[3]:

«Նըշան դըրէք»

Փերիա գավառում ամուսնությունը տեղի էր ունենում երկու ձևով՝ տղայի ցանկությամբ կամ (երբեմն) ծնողների կամքով՝ առանց հաշվի առնելու ամուսնացողի ցանկությունը: Երբ տղան ու աղջիկը սիրում էին միմյանց, տղան այդ մասին հայտնում էր իր ծնողներին և պահանջում, որ գնան այդ աղջկան նշան դնեն: Տղայի ծնողները խորհրդակցում էին միմյանց հետ և իրենց ազգականներից երկու տղամարդ ուղարկում աղջկա հոր տուն, որ աղջկա ծնողներից խոսք առնեն:

---

[1] Մինասյան 1998, 235-244:

[2] Զարգարյան 1980, ՀԱԻ արխիվ, թղթ. 26, էջ 1-16: ՀԱԻ արխիվում պահպանվում է նաև ազգագրագետ Դ. Դիլանչյանի ֆոնդը, որը նույնպես անդրադարձել է Փերիա գավառի ազգագրական նյութերին, սակայն դրանց մեջ չի ընդգրկել ամուսնահարսանեկան սովորույթները:

[3] Բանասաց՝ Սընկերտ գյուղի ծնունդ, հետագայում Չարենցավանի (գրանցման ժամանակ՝ Լուսավան քաղաքային տիպի ավանի) բնակիչ Հակոբ Գալուստյան:

Խոսք առնողները այնտեղ զրուցում էին զանազան թեմաներով և խոսակցության մեջ հարցնում. «Բա դուք չեք ասում, որ ընչի՞, ու՞ր եք էկի, ընչի՞ եք էկի»: Աղջկա ծնողները պատասխանում էին. «Ո՞նց թե ուր եք էկի: Էկել եք, բարով եք էկի, մեր աչքի վրա տեղ ունեք, մեր պապերը իրար հեդ ախպեր են էլի»: Տղայի կողմից եկածները պատասխանում էին. «Ախպե՛ր, բանը տըրանում չի: Մենք էկել ենք ձեր տնից հարս տանենք, ձեր բաղից «ծաղիգ քաղենք»: Մեր տղեն ձեր աղչգան սիրում է, ի՞նչ կասեք»: Աղջկա ծնողներն ասում էին. «Մենք պիտի տղին տեսնենք, ի՛նչ տիպի տղա է, կարա՞ կնիգ պահի, թէ՞ չէ: Աղջկան էլ պիտի հարցնենք տեսնենք ձեր տղին ուզու՞մ է, թե՞ չէ, ընչախն (հետո) էլ մե ջուղապ (պատասխան) կտանք»[4]:

Հաջորդ անգամ բերում էին տղային, աղջկա ծնողները տեսնում էին, իրար հետ խոսում, համաձայնության գալիս և «խոսք տալուց» առաջ էլ հարցնում իրենց աղջկան: Նա պատասխանում էր. «Դու՛ք գիտեք, կտաք՝ կառնեմ, չեք տա՝ չէ»: Աղջկա նման պատասխանից ու վերաբերմունքից հասկանում էին, որ համաձայն էր, և խոսք ուզողներին ասում էին. «Մատանի բերե՛ք, ձեր հարսն է»[5]:

Խոսք առնողները հարսնացուին համբուրում էին, մի փոքր նվեր էլ էին տալիս ու վերադառնում տղայի տուն: Այնուհետև տղայի ծնողներն ու բարեկամները ապագա հարսի համար պատրաստում էին նվերներ. մի զարդարած ղանդ (շաքարի կտոր), մի քանի նուռ, սերկևիլ, չամիչ, բադամ (նուշ), մի քանի լուլա նաբաթ (գլանաձև սառնաշաքար), կտորեղեն (զգեստ կարելու համար), վզնոց և մատանի:

Այս ամենը վերցնում էին ու գնում ապագա խնամիների («խնամոնց») տուն: Վառվող մոմերը ձեռքներին՝ մտնում էին աղջկա տուն: Աղջկա ծնողները խնամիներին բարի գալուստ մաղթելուց հետո հյուրասիրում էին ավանդական սովորույթների համաձայն: Երեք կամ չորս հարս (նորահարս) ու աղջիկ, մտնում էին աղջկա մոտ՝ շոր էին հագցնում (զգեստավորում), գլխին կապում էին չթից պատրաստած լաչակ, վրան մի բարակ յայլուխ (թաշկինակ) քաշում, որն էլ ծածկում էր հարսի երեսը: Ապագա հարսնացուին բերում կանգնեցնում էին ապագա «կէսուրկէսրարի» մոտ: Ապագա սկեսրայրը մատանիներ էր դնում հարսի մատներին, վզնոցը գցում վիզը, այնուհետև մյուս հարազատները հանձնում էին իրենց նվերներն ու շարունակում կերուխումը:

Այնքան ժամանակ, քանի դեռ հարսնացուն մնում էր նշանված, ամեն անգամ տղայի հարազատներին տեսնելիս նրանց հետ չէր խոսում, իսկ բարևի փոխարեն գլուխ էր տալիս ու անցնում: Իսկ երբ սկեսրանց կողմից գալիս էին հարսին տեսնելու, նա խոնարհվում էր, գլխով բարևում, բայց նրանց մոտ չէր նստում, չէր ուտում, չէր խմում: Այդ օրերին նրա բերանը շարունակում էր մնալ յամշաղով (թաշկինակով) ծածկված, ինչը խորհրդանշում էր, որ նա զրկված է փեսացուի բարեկամների մոտ խոսելու իրավունքից:

[4] Զարգարյան 1980, թ. 26:
[5] Զարգարյան 1980, թ. 26:

Ըստ Լ. Մինասյանի, նախքան հարսնացուի տուն գնալը երիտասարդի կողմը սովորաբար ստանում էր նրա ծնողների համաձայնությունը, և մի երեկո տղայի կողմից մի քանի հոգի գնում էին ապագա հարսնացուի տուն: Հարսնացուի տուն գնացողները խոսակցության ընթացքում ասում էին. «Եկել ենք ձեր բաղից ծաղիկ քաղենք». եթե հարսնացուի կողմը համաձայն էր լինում, ասում էին՝ «Շնորհավո՛ր լինի», իսկ եթե համաձայն չէր լինում, ասում էին՝ «Մեր բաղի ծաղիկը դեռ փոքր է և չի բացվել». այսպիսով մերժում էին, թեև նման դեպքեր քիչ էին պատահում: Ընդունելու պարագայում հարսնացուին, մի քող երեսին գցած, բերում հյուրասենյակ, համբուրում էին նրան և իրենց նվերները տալիս՝ դրամ, կանաչ ու կարմիր թելերով փաթաթված նաբաթ-շաքար, ինչպես նաև մի մատանի[6]:

«Հաշնիք» (հարսանիք)

Փերիահայոց մեջ ընդունված է եղել հարսանեկան արարողությունների համար պատրաստությունը սկսել անմիջապես նշանադրությունից հետո:

Տղայի ծնողները, երբ որոշում էին հաշնիք անել, տղայի հորն ուղարկում էին խնամիների տուն «վադա» («վաըդե») (ժամանակ և թույլտվություն) առնելու հաշնիքի համար, այսինքն, պայմանավորվում էին, թե երբ կարող էին գալ իրենց հարսին տուն տանելու, հարսանիք անելու:

Ավանդական սովորույթի համաձայն, եթե տղայի ընտանիքը հարուստ էր, ապա աղջկա ծնողները իրենց համաձայնությունը տալուց հետո պայմանավորվում էին հարսանեկան ծախսերի վերաբերյալ: Ըստ Զարգարյանի, նրանք կիսահրամայական և կիսախնդրական ձևով ասում էին, օրինակ. «500 թուման փող, չորս ղիդր[7] բրինձ, երկու ղիդր եղ (յուղ), ղիդրուկես չամիչ, մէկ ղիդր նուռ բե՛ր ու արի՛, «վադա» կտանք»: Իսկ եթե աղքատ էր լինում, ասում էին. «Ինչ կարող եք՝ տվեք»: Կէսրանք համաձայնվում էին ու խոստանում, որ կկատարեն այն, ինչ պահանջել էին աղջկա ծնողները:

Տղայի հայրը տուն հասնելիս տնեցիներին հանձնարարում էր, որ պատրաստեն խնամիների պատվերները, ապագա հարսի շորերը, մաշիկներն ու նրան պատկանելիք այլ իրեր, կապում էին մի բօղչայի (կապոց) մեջ ու մի քանի հոգու օգնությամբ այն ուղարկում հարսի տուն:

Տղայի բարեկամները վադա առնելուց հետո հավաքվում էին, «հրավերաթուղթ» գրում և տալիս էին գյուղի դաշտվանին[8] կամ տիրացուին, որոնք թուղթը տանում հարազատներին էին ցույց տալիս ու հայտնում հաշնիքի սկսվելու մասին: Հարազատներն այն ստորագրում էին՝ ասելով. «Աչքներդ լույս, կգանք հաշնիք,

[6] Մինասյան 1998, 235-236:

[7] Ընդունված կշռաչափերից է, մեկ ղիդրը հավասար է վեց կիլոգրամի:

[8] Դաշտվանը տվյալ համատեքստում մունետիկն էր, որն ապահովում էր մասնակիցների ներկայությունը հարսանիքներին:

Աստված շնորհավոր անի»: Հարսանիքից մեկ օր առաջ խորհրդակցում էին ու որոշում, թե ովքեր պիտի մակար (փեսացուի ընկեր)[9] գնան հարսին բերելիս:

Առաջին օրը սազուդընգլ(ի)ով (զուռնա-դհոլով) տղայի տանը ուրախանում, երգում-պարում էին մինչև լույս: Հաջորդ օրը առավոտյան նվագով, խաղ ու պարով գնում էին հարսի տուն: Ճանապարհի կեսից երկու տղամարդ էին ուղարկում, որ շուտ հասնեն խնամիներին և լուր տան, որ հաշնիքը գալիս է: Լուր տանողներին դիմավորելիս խնամիք ասում էին. ««Աղվեսները» եկան»: Խնամիները դիմավորում էին «հաշնքավորներին», հրավիրում հանդեսի տուն:

Հաշնքատանը (աղջկա հոր տանը) նախօրոք հատուկ տեղ էին պատրաստում դաքորի (փեսայի, թագավորի) ու քավորի համար, որոնք կանգնում էին կողք կողքի, ու սկսում էին խնջույքը, որ տևում էր մինչև ուշ գիշեր: Երկրորդ օրվա հանդեսի վերջում մակարատերերը[10] իրենց մակար-հյուրերին տուն էին տանում՝ մի քանի ժամով քնել-հանգստանալու համար:

Հաշնիքի երրորդ օրը, առավոտյան շուտ, սազանդարն արթնանում էր ու սկսում նվագել իր սազը: Փեսայի իգական սեռի ազգականները հավաքվում էին, հարսի ձեռքերը հինա դնում: Իսկ այդ ընթացքում սազանդարն ու դընգըլչին նվագում էին, հաշնքավորներն ու խնամիք պարում այնքան, մինչև որ հարսի ձեռքերի հինան չորանար: Հետո հարսին տանում էին մի առանձին սենյակ զգեստավորելու: Նորահարսի մեջքին կապում էին մետաքսից գոտի, գլխին՝ գլխաշոր (լաչակ), բերանը կապում (ծածկում) յամշաղով: Երեսը ծածկում էին քողով, գլուխը՝ կարմիր շորով[11], հետո զգեստավորած հարսին դուրս էին բերում ու տանում ժամ (եկեղեցի) պսակելու:

Տերտերն ու տիրացուն սպասում էին հարսին ու փեսային, քահանան պահպանիչ էր ասում, նրանց երեսները իրար կողմ ուղղում, մի մետաքսյա շորով ծածկում նրանց գլուխները և խաչը հանձնում քավորին, որն էլ այն պահում էր հարսի ու դաքորի գլխին: Պսակադրության ծիսակատարությունից հետո քահանան Ավետարանը հանձնում էր փեսային, ապա, վառված մոմերը ձեռքերին, նրանք դուրս էին գալիս ժամից, ուղղվում դեպի հարսի հոր տուն, ճանապարհին տերտերն ու տիրացուն իրենց երգն էին երգում, սազանդարն էլ նվագում էր համապատասխան եղանակը:

---

[9] Սովորույթի համաձայն, հաշնքավորների ձեռքին փայտ էր լինում: Խնամիներից ու գյուղի բնակիչներից ոմանք գալիս էին ընդառաջ ու մինչ նրանց հանդեսի տուն մուտք գործելը, վերցնում էին նրանց ձեռքի փեդերն ու հրավիրում իրենց տուն, որպես հյուր. նրանց էլ անվանում էին մակար:

[10] Մակարներին հյուրընկալող ընտանիքները:

[11] Նախքան եկեղեցի տանելը հարսին զգեստավորում էին, հետո բերում էին դաքորի (փեսայի) ու քավորի մոտ, կանգնեցնում էին նրանց հետևում, ու փեսայի վզից կապված շալի ծայրը տալիս հարսի ձեռքն ու այդ հանդիսավոր արարողության պահին, երգ ու պարով հաշնքավորներին ուղեկցում էին դեպի ժամ, որտեղ էլ պիտի կատարվեր ամուսնության ծեսը:

Եկեղեցուց տուն դարձող ժողովուրդը հյուրասիրվում էր հարսի հոր տանը, հանգստանում, ապա դուրս գալիս՝ ուղևորվելով դեպի փեսայի տուն[12]:

Նկ. 1. Հարսանիք Փերիայում (ՀԱԻ արխիվ, Սրբ. Լիսիցյանի ֆոնդ, թղթ. 3)

Նորահարսին նստեցնում էին ձիու վրա և ուրախությամբ, պարելով հեռանում նրանց տնից: Նորահարսին հոր տնից ճանապարհում էին հարսնախպերն ու հարսնաքուրը:

Երբ հասնում էին փեսայի տուն, նորահարսին իջեցնում էին ձիուց, տան դռան առաջ գորգ էին փռում, հարսը վրայով քայլելուց հետո կռանում ու հավաքում էր «խալին» և դնում էր մի անկյունում: Հետո նորահարսին փեսայի ու քավորի մոտից տանում էին մի առանձին սենյակ: Փեսան ու քավորը գնում էին հարսանյաց հանդեսի սրահը՝ մէջլիսի տուն, և սկսվում էր երրորդ գիշերվա հարսանյաց խնջույքը:

Փեսայի տանը՝ մէջլիստանը հյուրասիրվում էին, երգում-պարում, ուրախանում մինչև լույս: Հետո երկու հարս, նորահարսի թևերից բռնած, բերում պարեցնում էին ու տանում իր սենյակը՝ օթաղը:

Առավոտյան քահանան գալիս էր ու «Խաչվերաց» ասում, որով էլ վերջանում էր հարսանյաց կրոնական արարողությունը: Նորահարսի հետ եկած հարսանքավորները ստանում էին իրենց նվերներն ու վերադառնում տուն:

Իբրև ազգային ու ժողովրդական ավանդույթ և հին սովորույթ՝ նորահարսի երեսը 15 օր չէին բացում: Երբ լրանում էր 15 օրը, հավաքվում էին փեսայի բարե-

[12] Զարգարյանը նշում է, որ եկեղեցուց հետո գնում էին հարսի տուն, ինչը շատ տարօրինակ է: Համեմատելով ասենք՝ Մինասյանը գրում է, թե եկեղեցուց հետո հարսն ու փեսան գնում էին փեսայի տուն:

կամները, հանում հարսի երեսի քողը, նրան դուրս բերելով սենյակից՝ տանում էին սկեսուր-սկեսրայրի սենյակ, ապա երեսը ծածկում իր լաչակի տուտով (ծայրով)[13]:

Հարսանիքից 40 օր հետո նորահարսի հարազատները գալիս էին իրենց աղջկան այցելության. դա կոչվում էր «գլխալվա»: Դրանից հետո նորահարսին իրավունք էին տալիս գնալու աղբյուր՝ ջուր բերելու, նաև հարևանների տուն գնալ-գալու:

Գլխալվայից հետո աղջկա ծնողները նորահարսին հերանց (դարձ) էին տանում, մեկ-երկու շաբաթ պահում ու հետ բերում սկեսրանց տուն:

Լևոն Մինասյանը, անդրադառնալով փերիահայոց հարսանիքին, նշում է, որ գյուղերում հարսանիքները սովորաբար տևում էին երեքից չորս օր: Եթե հարսնացուն նույն գյուղից էր լինում՝ երեք, իսկ եթե այլ վայրից՝ չորս օր: Հարսանիքները շատ անգամ սկսվում էին երկուշաբթի կամ երեքշաբթի (եթե հարսնացուն այլ գյուղից էր), որպեսզի պսակի օրը ազատ լիներ արարողություններից և չհամընկներ կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին:

Հարսանիքին փեսան մի քանի հոգու հետ գնում էր հարսի գյուղ, նրան ուղեկցող երիտասարդները (մակարներ) ձեռքներին փայտ էին ունենում, նախքան գյուղ մտնելը սպասում էին մինչև խնամիները համաձայնության էին գալիս, և երբ ստանում էին այդ իրավունքը՝ նվագով մտնում էին գյուղ, իսկ գյուղացիներն էլ դիմավորում էին նրանց, ամեն մեկը մի մակարի իր տուն հյուր էր տանում և հյուրասիրում:

Հարսանիքի նախորդ օրը մսացու էին մորթում, և եթե հարսնացուն նույն գյուղից էր, հրավիրում էին նաև խնամիներին: Երեկոյան փեսային նվագով բաղնիք էին տանում, դրանից հետո էլ սկսվում էր փեսայատեսը՝ քավորի և նրա ընտանիքի մասնակցությամբ: Փեսայի և քավորի հարազատները նրանց շաքար և այլ նվերներ էին տալիս:

Նույն երեկոյան սազի նվագակցությամբ խարջ (բաժին) էին տանում հարսի տուն, աղջկա ձեռքերը հինա դնում: Այդ արարողության ժամանակ հարսը ձեռքերը չէր բացում, մինչև որ լավ նվեր կամ դրամ ստանար: Հարսանքավորները պարում էին, քահանան նշան էր օրհնում, դաքորին նոր զգեստներ էին հագցնում և «ծաղիկ կանչացնում» (դրամական նվեր տալիս)[14]:

Հաջորդ օրը փեսային սազով տանում էին հարսի տուն, որտեղ տեղի էր ունենում նշան օրհնելու արարողությունը: Հարսի շորերն օրհնելուց, հոր ու մոր օրհնանքն ստանալուց հետո գնում էին եկեղեցի:

---

[13] Սովորույթի համաձայն, սկեսուր-սկեսրայրը հարսին փող էին տալիս՝ որպես «երեստես», որից հետո հարսը բացում էր իր երեսը նրանց մոտ, իսկ քիթ-բերանը պահում ծածկած՝ չխոսելով ոչ մեկի հետ, մինչև որ սկեսուրի և սկեսրայրի թույլտվությամբ իրավունք էր ստանում խոսելու տան փոքրերից մեկնումեկի հետ, որի միջոցով էլ պետք է լսեր ու պատասխաներ տնեցիներին: Ու այդպիսով նորահարսը սկսում էր ապրել նոր տանը որպես տան անդամ:

[14] «Ծաղիկ կանչացնել» կամ «ծաղ կանչելը» հարսանիքից հետո էր կատարվում: Գյուղի դալլաքը (սափրիչը) կամ ժամկոչը, մատուցարանը ձեռքին, կանգնում էր տան վերևի մասում՝ հյուրերի կողքին և ներկաների նվերները բարձրաձայն հիշատակելով՝ դնում սկուտեղի մեջ: Վերջում հաշվում էր դրամը և տալիս փեսայի ընտանիքին:

Եկեղեցի գնալիս հատուկ մեղեդի էին նվագում, որ հարսի բարեկամներն արտասվեին, քանի որ իրենց աղջկան տանում էին: Եկեղեցի մտնելիս դռան վերևում խաչի նշան էին գծում՝ չար սատանայի աչքը հանելու և նորապսակներին չարից հեռու պահելու համար, իսկ եկեղեցուց դուրս գալիս «Արեգակն արդարութեան»[15] շարականն էին նվագում. Ավետարանը դրվում էր փեսայի կրծքին:

Պսակի ծիսակարգից հետո հարս ու փեսայի վզին կանաչ ու կարմիր թելերից նարոտ էին կապում, տան դռան առջև էլ մի քրեղան (կավե աման) դնում, որը փեսան կոտրում էր՝ չարը խափանելու նպատակով:

Երբ տան դռնից ներս էին մտնում, սկեսուրը նողլ[16] ու չամիչ էր շաղ տալիս հարսի գլխին, իսկ երբ բակ էին մտնում, հարսը կանգնած էր մնում սենյակի դռան առջև, մինչև սկեսուրը գար և նվեր տար, կամ երբեմն էլ սկեսուրը իր դուլաբի (պահարանի) բանալին էր տալիս, որից հետո հարսը գնում էր ներս:

Պսակի օրը՝ երեկոյան, փեսային աներանց տուն «գող» էին տանում այլ հյուրերի հետ և հյուրասիրում: Հարսի հարազատները հավաքվում էին փեսայի շուրջը և մի քանի ժամ փորձում էին փեսային խոսեցնել, փեսան էլ փորձում էր շատ չխոսել, որ անհարմար իրավիճակում չհայտնվեր:

Փերիայում, ըստ Մինասյանի, հարուստ էին նաև հետամուսնական ծիսական գործողությունները:

Պսակի հաջորդ օրը փեսայի տանը «որս» էր արվում. բարեկամներին էին հրավիրում, որի ընթացքում փեսան դհոլ-զուռնայի նվագի ժամանակ գառ, աքլոր էր մորթում կամ նուռ կտրում և վերև գցում, որը տղաները բռնում էին օդի մեջ, իսկ գառն ու աքլորը խորովում էին և հյուրասիրում հյուրերին:

Հարսանիքներին մատուցվող ուտելիքներից հայտնի էր յախնին (մսախաշու-արգանակ), երբեմն էլ փլավ և խորտիկ էին հյուրասիրում, հիմնականում դա կախված էր հարսանքատիրոջ հնարավորություններից:

Վերջին օրը երեկոյան քահանան գնում էր հարս ու փեսայի սենյակը, աղոթք ասում, «Խաչվերաց» ծեսը կատարում ու նրանց վզից արձակում պսակի ժամանակ կապած նարոտը: Մինչև քահանայի գալը քավորին սազով տանում էին իրենց տուն:

Նույն գիշերը հարսն ու փեսան առագաստ էին մտնում. առանձին սենյակի մի անկյունում վարագույր էին կախում, և հարսը միշտ դրա հետևում էր մնում մեկ-երկու շաբաթ մինչև որ կամաց-կամաց դուրս գալով՝ մտերմանում էր իր նոր ընտանիքի անդամների հետ:

Համեմատական բնութագիր

Համեմատելով Զարգարյանի և Մինասյանի նյութերը՝ տեսնում ենք, որ նրանց բերած տվյալների մեջ կան ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ: Մինասյանը անդրադարձել է հարսանիքի արարողության ժամանակ կա-

[15] Ս. Ներսես Շնորհալու «Առաւօտ լուսոյ» շարականը:
[16] Շաքար, որի մեջ կար հիլ, համեմի սերմ, քերած ընկույզ, նուշ և գետնանուշ:

տարվող մի շարք գործողությունների, որոնք չի հիշատակել Զարգարյանը իր նյութերում. դրանք են՝ մսացու պատրաստելը, փեսային բաղնիք տանելը, հարսանիքի հրավիրյալների բերած նվերները հայտարարելը, նշան օրհնելու և եկեղեցում կատարվող պսակի արարողությունները, դրանից հետո փեսայի տուն գնալը և սկեսուրի՝ նորահարսին դիմավորելը, ինչպես նաև հետամուսնական ծիսական արարողությունների նկարագրությունը՝ փեսային աներոջ տուն «գող» տանելը, փեսայի տանը «որս» կազմակերպելը, ինչպես նաև հարսանիքի ժամանակ մատուցվող ուտեստները:

Զարգարյանը նկարագրել է հարսանիք կազմակերպելու ժամանակ խնամիների միջև պայմանավորվածությունը, թե ով ինչ ծախս պետք է աներ: Նա խոսում է նաև հարազատների կողմից հարսանիքի հրավիրատոմսերը ստորագրելու մասին, մանրամասն նկարագրում հարսի հագուստը: Ներկայացնում է պսակի արարողությունից հետո հարսի հոր տուն գնալը, այնտեղ հյուրասիրվելը, ինչը շատ տարակուսելի է, իսկ Մինասյանի նյութերում եկեղեցուց հետո գնում են ուղղակի փեսայի տուն: Զարգարյանը անդրադարձել է նաև գլխալվային:

Այս տարբերություններն այնքան էական են, որ բացատրության կարիք ունեն: Դրանք կարող ենք կապել այն բանի հետ, որ Մինասյանը նյութերը գրի է առել տեղում՝ Փերիայում, և ժամանակագրական առումով ավելի վաղ, քան Զարգարյանը, որը դրանք գրի է առել Հրազդանում ապրող հայրենադարձներից 1980-ական թվականներին:

Կարծում ենք՝ հնարավոր է, որ դեռևս մնացած լինեն որոշ տվյալներ նույնպես, որոնք բացահայտելու համար անհրաժեշտ է հետևողական ուսումնասիրություն:

Հարսանեկան ծիսական առարկաները

Եթե Լ. Մինասյանի ուշադրության կենտրոնում են հարսանեկան արարողությունները, ապա Ծ. Զարգարյանի նյութերում շեշտը դրվում է մի շարք առարկայական խորհրդանիշների մանրամասն նկարագրության և կիրառության վրա:

Հարս ու փեսայի մատանիները

Փերիայի հայկական գյուղերում հարսանիքներին փեսայի համար պատվիրում էին արծաթե կանաչ ակով մատանի, իսկ հարսի (նորահարսի) համար՝ կարմիր ակով: Սովորության համաձայն՝ տղան իր մատին դնում էր կանաչ թելով մատանին, իսկ աղջիկը՝ կարմիր թելերով փնջած («էրկու փունջ») կարմիր մատանի: Պսակի ժամանակ փեսան հանում էր իր մատի մատանին դնում աղջկա մատին, իսկ աղջկա մատի փնջած կարմիր մատանին հանում, դնում էր իր մատին:

Հարսանեկան մասունքներից էր **հարսի փունջը**, որը նորահարսի քողի վրայից է ամրացվել: Այդպես է կոչվել մազաթելը (ծամթելը), որը հարսանիքներին թիկունքի կողմից մազերի վրա կրում էին ամուսնացող աղջիկները, տոնին մասնակցող նորահարսները: Մազաթելի մեջ օգտագործված փնջերը, ուլունքա-

ծոպքերը և մյուս զարդանախշերը, ըստ Զարգարյանի, խորհրդանշել են պտղաբերության, բուսապաշտության, չարի և բարու, նորահարսի մեջքի ամրակազմության գաղափարները: Ժամանակակից Հայաստանում հարսի փունջը ծաղկեփունջն է, որը հարսը հարսանեկան արարողության ժամանակ նետում կամ նվիրում է չամուսնացած աղջիկներից մեկին:

Կանաչ-կարմիր (կոզբանդ). այս առարկաները, որոնք Զարգարյանը հմայիլներ է անվանում, խորհրդանշում են՝ կանաչը՝ կյանք, կարմիրը՝ արև (արյուն), ինչպես նաև ժառանգության, սերնդատվության, զույգերի մեկ մարմին կազմելու գաղափարները: Ցավոք, ո՛չ Լ. Մինասյանը, ո՛չ էլ Ծ. Զարգարյանը չեն նկարագրել, թե հատկապես ինչ ձևով են կապել կանաչ-կարմիրը փերիահայերը:

Խեչփունջը հարսանեկան խորհրդանիշ է, որը հայտնի է նաև «թագ» անունով: Այն պատրաստել են տղամարդիկ կանաչ, կարմիր, կապույտ և սպիտակ թելերից, որոնց կենտրոնամասում նախօրոք փաթաթում էին սպիտակ բամբակ:

Փնջած փետ (կենաց ծառ). այս առարկան փերիահայոց մեջ հետհարսանեկան ծիսաշարին է վերաբերում: Այն պատրաստում էր առաջին անգամ հոր տուն հյուր գնացած նորահարսը և նվիրում ամուսնու եղբոր տղաներին: Ըստ Զարգարյանի՝ փնջած փետը անարատության և հավատարմության խորհրդանիշն էր:

Օղչրի հեքալ (ոչխարի հմայիլ). երբ նորահարսն առաջին անգամ ոտք էր դնում փեսայի տուն, տղայի հարազատները, ավանդույթի համաձայն, նորահարսին և փեսային ոչխար էին պատիվ անում, հարսն էլ մեկ ընդհանուր եռանկյունուց պատրաստած փնջած հեքալը կախում էր ոչխարի վզից:

Փերիահայերի հարսանեկան կարևոր խորհրդանիշներից էին հարսանեկան «**շաքարները**»: Զարդարուն շաքարը պատրաստվում էր փեսայի տանը՝ շաքարից ու մեղրամոմից, վրան նկարում էին փեսայի և հարսի անվանատառերը, տարբեր նախշեր և խորհրդանշաններ[17]: Ե՛վ իրանահայերի, և՛ իրանցիների հարսանիքների ժամանակ առկա էր այս շաքարը, միայն զարդարանքներն էին տարբեր: Ավելի հին ժամանակներում այդ նույն շաքարին տիկնիկի տեսք էին տալիս, որը հարսի տուն էին տանում ձեռքերը հինա դնելու օրը[18]:

Փերիայի շրջանում հարսանիքներում հաճախակի էր կանաչ և կարմիր գույների համադրությամբ առարկաների կիրառումը, որը չի եղել այլ շրջաններում: Բացի կոզբանդից, որ կա ազգագրական բոլոր շրջաններում, փերիահայերի շրջանում կանաչ-կարմիրի օգտագործումը հանդիպում էր նաև նշանադրության ժամանակ՝ հարսին մատանի նվիրելիս, տալիս էին նաև կանաչ-կարմիր թելերով փաթաթված շաքարի կտոր: Կանաչ-կարմիր թելերի գործածումը առկա էր նաև հարսի ու փեսայի մատանիներ փոխանակելու ժամանակ: Խեչփնջի պատրաստման ժամանակ ևս օգտագործվել են կանաչ-կարմիր թելեր:

---

[17] Բանասաց՝ Նարինե Սարգսյան, 1981 թ. (Թեհրան):
[18] Բանասաց՝ Արմենուհի Դավթյան (Աբովյան):

Ըստ մեզ հայտնի նյութերի՝ անհասկանալի է մնում ծիսական որոշ առարկաների կիրառումը, ինչպես նաև այն, թե դրանց որ մասն էր հարսանիքից հետո ոչնչացվում, որ մասը պահվում:

Եզրակացություններ

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Փերիայում և Հայաստանում բնակվող փերիահայերի հարսանեկան արարողություններին բնորոշ են որոշակի առանձնահատկություններ, ինչպես, օրինակ, հարսանիքի ժամանակ եկեղեցու մուտքի մոտ հմայական-պաշտպանական գործողությունները, որոնց չենք հանդիպում Հայաստանի այլ վայրերում: Եկեղեցի մտնելիս դռան վերևում խաչի նշան էին նկարում՝ չար սատանայի աչքը հանելու և նորապսակներին չարից հեռու պահելու համար:

Փերիայի հարսանիքներում առկա են հատուկ տեղական անվանումներ, օրինակ, հարսի տուն խարջ (բաժին) տանելը, ծաղիկ կամ ծաղ կանչացնելը՝ հարսանիքից հետո նվերներ հայտարարելը: Պսակի օրը՝ երեկոյան, փեսային աներանց տուն «գող» էին տանում և հյուրասիրում, իսկ պսակի հաջորդ օրը «որս» էին կատարում:

Փերիահայերի հարսանիքներում ընդգծված էր խորհրդանիշների դերը: Հարս ու փեսայի մատանիները՝ կանաչ-կարմիր քարերով, այդ նույն գույնի թելերով էին փաթաթված. հարսանիքի ժամանակ հարսն ու փեսան դրանք փոխանակում էին:

Ժամանակակից Հայաստանում հարսի փունջը ծաղկեփունջն է, որը հարսը հարսանեկան արարողության ժամանակ նետում կամ նվիրում է չամուսնացած աղջիկներից մեկին, իսկ փերիահայերի մոտ՝ հարսի փունջը, որը պատրաստվում էր ծամթելից, ուլունքներից և ամրացվում հարսի քողին:

Հարսանեկան «շաքարի» կամ «շաքար-տիկնիկի» օգտագործումը, որը նույնացվում է քաղցրի հետ, պատրաստվում էր շաքարից ու մեղրամոմից, և տանում էին հարսի տուն՝ հինադրեքի ժամանակ: Սա իրանահայերի հարսանիքի ևս մեկ յուրահատկությունն էր:

Լ. Մինասյանի և Ծ. Զարգարյանի աղբյուրներում կան բավականաչափ հակասություններ և տարբերություններ: Այդ տարբերությունները խիստ էական են: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Մինասյանը նյութերը գրի է առել տեղում՝ Փերիայում, ժամանակագրական առումով՝ ավելի վաղ, քան Զարգարյանը, որը դրանք գրի է առել Հրազդանում ապրող փերիահայերից (1980-ական թթ.):

Խնդիրը դեռևս հետազոտության կարիք ունի՝ հատկապես այն փոփոխությունները նկատի ունենալով, որոնք կատարվել են փերիահայոց հարսանեկան ավանդույթների մեջ հայրենիք տեղափոխվելուց հետո:

Գրականություն

ՀԱԻ արխիվ, Ծ. Զարգարյանի ֆ., թղթ. 26, էջ 1-16:

Մինասյան Լ. 1998, Գիւղական բառ ու բան, Նոր Ջուղա, տպ. Սբ. Ամենափրկիչ վանքի, 421 էջ:
Ավետիսյան Լ. 2021, Դաշտային ազգագրական նյութեր, Երևան:

ՓԵՐԻԱՀԱՅԵՐԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ. ՆՇԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐՍԱՆԻՔ

Լիանա Ավետիսյան

Ամփոփում

Իրանի Փերիա գավառի հայաբնակ գյուղերում կատարվող նշանադրության («նըշան դըրեք») և հարսանիքի («հաշնիքի») սովորույթներին ու ծեսերին անդրադարձել է Լևոն Մինասյանը: Ծատուր Զարգարյանը այդ ամենին վերաբերող նյութերը հավաքել է հայրենադարձված փերիահայերից:

Փերիահայերի հարսանիքը տևում էր երեքից չորս օր: Այն սկսվում էր խնամիների՝ իրար տուն գնալուց, հարսանիքի հետ կապված նախապատրաստական պայմանավորվածություններ ձեռք բերելուց հետո:

Հարսանիքի արարողության ժամանակ կատարվող գործողություններից էին՝ մսացու պատրաստելը, փեսային բաղնիք տանելը, նվերներ հայտարարելը, նշան օրհնելը, եկեղեցում կատարվող պսակի արարողությունները, դրանից հետո փեսայի տուն գնալը և սկեսուրի դիմավորելը նորահարսին, գլխալվան: Հետամուսնական սովորություններից էին փեսային աներոջ տուն «գող» տանելը, փեսայի տանը «որս» կազմակերպելը, ինչպես նաև հարսանիքի ժամանակ ուտեստներ մատուցելը:

Փերիահայերի շրջանում ընդգծված սովորույթ էր նաև հարսանեկան ծիսական առարկաների կիրառումը, ինչպես հարս ու փեսայի մատանիները, հարսի փունջը, կանաչկարմիրը (կոզբանդ), խեչփունջը, փնջած փետը, օղչրի հեքալը, հարսանեկան շաքարտիկնիկը:

Բանալի բառեր՝ Փերիա, նըշանդրէք, հաշնիք, խեչփունջ, հարսի փունջ, փնջած փետ, հարսանեկան շաքար:

РИТУАЛЬНО-КУЛЬТОВАЯ ЖИЗНЬ ПЕРИЙСКИХ АРМЯН: ПОМОЛВКА, СВАДЬБА

Лиана Аветисян

Резюме

Изучением ритуально-культовой жизни, в частности, ритуала помолвки («ншандрек») и свадьбы («хашник») в армянонаселенных деревнях иранской провинции Перия занимался Левон Минасян. Эти исследования пополнились материалами Цатура Заргаряна, собранными у репатриированных перийских армян.

Свадьба перийских армян длилась от трех до четырех дней. Родственники с обеих сторон приходили друг к другу в гости, чтобы подготовиться к свадьбе.

Свадебная церемония включает в себя: поход жениха в баню, озвучивание подарков, церемонию благословения обручения, свадьбу в церкви, далее – посещение дома жениха и приветствие невесты со стороны свекрови, *глхалва* (мытье головы). Имели место также постсвадебные обряды (препровождение жениха в

роли «вора» в дом тестя, организация ритуальной «охоты» в доме жениха), а также подача всяких блюд на свадьбе.

Среди армян Перии также широко распространено использование свадебных ритуальных предметов: кольцо жениха и невесты, волосяной убор невесты, зелено-красный *козбанд* (повязка накрест), *хечпундж* (символическая корона), украшенное дерево, *охчри хекал* (амулет), свадебная сахарная кукла.

Ключевые слова – Перия, помолвка, свадьба, букет невесты, хечпундж, украшенное дерево, свадебный сахар.

THE RITUALISTIC AND CULTUC LIFE OF THE ARMENIANS OF PERIA: ENGAGEMENT, WEDDING

Liana Avetisyan

Abstract

Traditions and rituals of engagement (*n'shan d'nel*) and wedding (*hashnik*) in the villages of Iran's Province Peria inhabited by the Armenians were described by Levon Minasyan. As additional archival sources serve materials gathered by Tsatur Zargaryan among the repatriated Armenians from Peria.

The wedding of Peria Armenians lasts three to four days, starting with reciprocal visits of the bride's and the bridegroom's relatives to acquire agreement concerning preparation for the wedding.

Several wedding ceremonies are described such as: slaughtering of the animal, taking the bridegroom to the bath, advertisement of presents, blessing of the engagement, nuptial in the church, subsequent procession to the bridegromm's home and greeting of the mother-in-law for the bride, "headwashing", after-wedding ceremonies such as taking the bridegroom as a "thief" to the house of his father-in-law, organization of the ritual "hunt", as well as dishes served during the wedding.

Peria Armenians used such ritual objects as the rings of the bride and the bridegroom, the hairdress of the bride, the red and green band of the bridegroom, *khechpoonj*, the embellished tree, the sheep's talisman, a wedding doll-sugar.

Key words – Peria, engagement, wedding, *khechpoonj*, embellished tree, wedding sugar.